



Հավելված թիվ 1  
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի  
30.09.2019թ. թիվ 387-Լ որոշման

## Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

### ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2

30.09.2019թ.

#### Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09<sup>00</sup>-ից մինչև 18<sup>00</sup>-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- 1) **Փաստաբանի վարքագծի կանոնադրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 2) **Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 3) **«Փաստաբանի օր» սահմանելու մասին:**

Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09<sup>00</sup>-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18<sup>00</sup>-ին:**

Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի [www.advocates.am](http://www.advocates.am) կայքէջից:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
աշխատակազմ